

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Ի լեառն ըստէպ ընդ հովանեաւ ծեր կաղնւոյն
 Տըխրազգեցիկ բազմիմ ի մուտս անդ արփւոյն ,
 Յաճեմ ըստ դէպս զաչս իմ ընդ մարգն առննթեր՝
 Ոյր յեղյեղուկ պարզի զոտիւք իմ պատկեր :
 Ըստ փըրփրադէզ խոխոջէ գետն ի կոհակ ,
 Եւ ի նըսեմ զեռայ ի խորս հեռարձակ ,
 Ընդ լիճն անշարժ՝ նիրհեալ զիւր ջուրս ծաւալէ ,
 Կամ երեկին աստղ ընդ կապոյտըն ծագէ :
 Ի ծայր լերանցս՝ ի մութ մայրեաց պըսակեալ՝
 Դեռ վերջալոյս ձրգէ վերջին իմն ըզփայլ .
 Եւ դըշխոյին խաւարի կառք շոգեյոյզ
 Կերամբառնան՝ սպիտակ յորտոս սըփռեալ լոյս :
 Իայց գութաշէն անդ ի ծայրից խոյացեալ
 Չայն կրօնաւոր խաղայ՝ նդ այերսն ի ծաւալ .
 Ճանապարհորդ կառեալ . եւ զանգն այն գեղջուկ
 Սուրբ խառնէ վանգս յաւուրն յետին ի շըշուկ :
 Եւլ անընդոստ սիրտս ի պատկերս յայդ քաղցունս՝
 Զըզգայ յանձին ինչ առ նոքօք ըզմայլմունս .
 Խոկամ զերկիր թափառական զերդ ըստուեր .
 Կենացն արփի մեռելոց ոչ ազդէ ջեր :
 Բըլըոց ի բլուրս յաճեցեալ զաչս իմ ընդ վայր ,
 Բնդ հիւսիսի՝ նդ հարաւ , ի մոից յարփւոյն ծայր ,
 Բնդ ծագս համայն սրանամ անբաւ միջոցի ,
 Երջանկութիւնն ինձ ուրեք ոչ ակն ունի :
 Օ ի ինձ ծըմակ տեղիք , պալատքդ այդ եւ գեղ .
 Սին երեւոյթք՝ յորոց բարձեալ է ինձ գեղ .
 Դեռք , ժայռք , պուրակք , միայնութիւնք ցանկալի
 Իակ մի լոկ չիք՝ եւ բնաւդ էք ամայի :
 Սինչ ծիր արփւոյն սկսեալ յանգի ետ ընդ ետ՝
 Ընփոյթ աչօք գընամ նորին ես ըզհետ .
 Թէ մութ կամ ջինջ յերկին մըտէ կամ տայ լոյս՝
 Օ ի ինձ արփին . ինձ չիք յաւուրց աստի յոյս :
 Թէ՛ նդ լայն ուղին զնա հետեւել մարթայի ,
 Ըմենուրեք գոյր ինձ դիտեալ ամայի .
 Բէ ես ցանկամ ինչ որ նովաւ փայլի վառ .
 Ի տիեզերց ինչ ոչ հայցեմ անըսպառ :
 Եւլ անդր արդեօք քան զբոլորին իւր զեզերս
 Ուր ստոյգն արփի ծագէ ընդ այլ տիեզերս ,
 Թէ ըզնըշխարքս յերկիր թողուլ ինձ մարթէր ,
 Ո՛հ , յոր այնչափն երկնեցի շող երեւեր :

Ընդ յանձկարին արբենայի ես աղբեր ,
 Ըզոյս ես անդ գրտանէի եւ ըզսէր .
 Եւ ըզբարին՝ տենչանք ոգւոց համօրէն՝
 Որում անուն ինչ չիք յերկիր մեր այսրէն .
 Ընդէր չիցէ յարեւելից ինձ ի Թեւս
 Ո՛վ իղձ սըրտիս իմ սաւառնել մինչ առ քեզ .
 Օ՛ր եւս յերկիր մընամ յաքսոր տակաւին .
 Ո՛հ , չիք յերկիր եւ ընդ իս մասն եւ բաժին :
 Յորժամ սաղարթն անկանիցի յարօտին ,
 Հողմն երեկի առնու քըշէ ի հովտին .
 Եւ ես նման եմ սաղարթոյն վաղանցիկ .
 Տարայք հանգոյն մըրըրկաշունչ փոթորիկք :

ԼԱՄԱՐԴԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Շեփարտանի պարտը :

Բշխարհքիս վրայ եղած անուանի պալատներէն մէկն ալ Շեփարտան աւանին պալատն է , որ Բնատրիոյ կայսերաց զբօսանքի տեղն է : Ընդ համար այս անգամ կ'ուզենք հոս համառօտ տեղեկութիւն մը տալ մեր բանասէր ընթերցողաց ասոր վրայօք :

Շեփարտան , որ Սեննա մայրաքաղաքէն փարսախ մը հեռու է , ժեղաւուն մէջ զինուորաց դադարի , զբօսանքի եւ միանգամայն կայսերական ընտանեաց իշխանազուններուն որսի տեղ մըն էր : Բայց վերջէն քանի մը կայսրներ հոն ընդարձակ պարտէզներ ու կենդանեաց փակարան շինեցին , որոնցմով անանկ նշանաւոր եղաւ , որ երբոր 1683^{ին} Տաշիկները առաջին անգամուն Սեննայի պարիսպներուն տակը տեսնուեցան , ասոր վրայ աչք ձգելով՝ ամէն բանը յափշտակեցին : Ի հօրոյտ Ակայսրը Տաշիկաց կործանած տեղերը նորոգելէն վերջը՝ որոշեց որ իր որդւոյն Յովսէփայ արշիդքսին համար նոյն տեղը պալատ մը շինէ : Բայս պալատիս շինութիւնը 1690^{ին} սկսաւ , որուն յատկագիծը Ֆիշէր երեւելի ճարտարապետը տուաւ . իսկ երբոր 1700 տա-

րւոյն ամբողջ շէնքը լմնցաւ , փառաւոր նաւակատեաց հանդէս մը ըրին՝ մեծաւեծ պատերազմական խաղերով :

Յովսէփ Ա երբոր հօրը մահուանէն վերջը կայսր եղաւ , այս պալատիս վրայ քանի մը նորոգութիւններ ըրաւ : Բայց ամենէն աւելի Սարիամ (Սերեզա կայսրուհին այս պալատը շատ զարդարեց ու գեղեցկացուց : Ինքը ամէն պալատներէն աւելի Շեփարտանի պալատը կ'ախորժէր իբրեւ զուարճութեան տեղ , եւ իրեն ամառուան բնակութիւնը հոս հաստատեց : Ուստի անհամար արուեստաւորներ իր աչքին տակը 1744^{ին} ինչուան 1750 տարին անդադար աշխատեցուց : Բայց որովհետեւ իրեն գանձերուն յարգը լաւ կը ճանչնար , զորոնք հասարակաց պիտոյիցը կը պահէր , ուստի Բագագի ըսուած ճարտարապետին յանձնեց որ ծախքերու խնայութիւն ընէ : Բայս ճարտարապետը Թագուհւոյն հրամանին հպատակելով՝ ստիպուեցաւ իրմէ առջի Ֆիշէր ճարտարապետին տուած ձեւը պահել , եւ քիչ մը աւելի ընդարձակել ու գեղեցկացընել . ասանկով հին դղեակը քիչ մը փոփոխութեամբ նոյն մնաց : Բնականապէս այսպիսի շէնք մը որ երկու այլեայլ երեւակայութի ունեցող ճարտարապետներէ եւ զանազան ժամանակ շինուած է , անկարելի է որ իր ձեւին մէջ ըստ ամենայնի վայելուչ համեմատութիւն մը ունեն-